


ԻՆԱԽԱՎԿԱՅՈՒՀԻՆ

Ս. Ս Ա Ն Դ Ո Ւ Ւ Տ



. . . Mamibus date lilia plenis;
Purpureos spargam flores (*).
VIRGIL. *Eneid. lib. VI.*

Հայոց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ:
Ինքն այլ ձեզի նըման էր կոյս,
Աչքերը քաղցր իբրեւ ըպյոյս.
Ճակատ՝ լուսնին պէս շողաղարդ,
Այտերը ծիլ ծիլ վառ իվարդ:
Ինքն այլ ունէք ունի մազեր,
Շուշանազեղ հասակ նազէր.
Ինքն այլ ձեզի պէս էր քլնքուշ,
Ինքն այլ սըրտից փափաք անուշ:
Հայոց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ:

Հայրը Հայոց էր հըզօր տէք,
Եւ մայր՝ Հայոց թագուհին էր.
Եւ ինք հօրմէն՝ սիրտ հաստատուն,
Մօրմէն՝ առել մարմին սիրուն:
Թագաւորին էր սիրելի
Քան ըզբոլոր փառս աշխարհի,

(*) . . . Շուշանը տուք բրոնալիք.

Հեղից ծաղկունը ծիրանիս:

Վերգոլ. Էնիակ. գիրք 2.

Եւ թագուհւոյն՝ քան զիւր գըստրիկ
Զըկայր գոհար չընաշխարհիկ:
Հայաց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ:

Թէ գլուխն լքօղ ոսկեբեհեզեզ
Յարքունական իջնէր պարտէզ,
Զըկայր ծաղիկ մի շողշողուն
Որ նորա պէս վառէր սիրուն.
Եւ երբ գարնան զըւարթ գիշեր
Երկինք տանէր պայծառ բըբեր,
Շիկնէր հրավառն այլ արուսեակ
Իլոյս աչացն այն անուշակ:
Հայաց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ:

Ուր երեւէր կոյսն այն աղուոր,
Կարծես շընորհն էր երկնաւոր,
Ախտ եւ ցաւեր սըրտից ամէն
Փարատէին իւր բուրժանէն.
Ինչպէս ամառն իտաք արեւ
Քաղցր է ծաղկանց սիւք հեշտաթեւ,
Այսովէս եւ կոյսն Հայոց մեծաց
Էր բաղձալի տեսանողաց:
Հայաց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ:

Հայոց մայրերը կըսէին.
« Չեմք նախանձիր զիթագ մեր տիկնին,
Այլ զի այդպէս ունի աղջիկ
Որում նըման չէ եւ Սատղիկ »: —
Հայոց հայրերն ալ կըսէին.
« Ի՞նչ բաղդ է մեր թագաւորին.
Հոռոմ եւ Հայ աշխարհ մէկտեղ
Զարժեն ըզգանձ այս հրաշագեղ »: —

Հայոց կոյսեր,

Շուշան՝ վարդեր

Փունջ փունջ առէք տարէք ուխտ

Առ թագուհին ձեր Սանդուխտ:

Թագաւորներն այլ կըսէին.

« Մեզմէ որո՞ւն արքայորդին

Երանանայ գրգուել իծոց

Զայն աննըման կուսան Հայոց »: —

Պարթեւ, Հոռոմ, Հընդիկ թագեր

Մի ըզմիով գահ եւ գանձեր,

Նախանձընդգէմ յիրեար թափին

Առ սոս Հայոց մեծաց Կուսին:

Հայոց կոյսեր, եւ այլն:

Բայց նա վափիկիկ ստքերուն տակ

Զարկաւ կոխեց գանձն ու պըսակ.

Ո՞չ, չեն սոքա, չեն Սանդըխտի

Արժանաւոր վափաք սըրտի.

Նորա մաքուր սիրտն եւ աչեր

Երկնակարօս գարձել իվեր,

Ո՞ր սիրտ յերկրի, ո՞ր պատանի

Սըրտի Կուսին այն արժանի:

Հայոց կոյսեր, եւ այլն:

« Հայր իմ, — գոչեց, — ես ինձ վեսայ

Մեծ քան զամէն ունիմ արքայ.

Նորա պըսակ՝ սուր սուր փուշէ,

Ինձ քան զամէն թագ անուշ է.

Նա խոստանայ ինձ վառս անանց,

Խաչ մը նորա մէկ հատիկ գանձ.

Եւ ես վաղեմ այնու յուսով,

Սիրտրս վառած է իւր սիրով»: —

Հայոց կոյսեր, եւ այլն:

Խըսովեցաւ Կուսանին հայր,

Եւ շատ արցոնք թափեց իւր մայր.

« Մի զայդ ասեր, աղջիկ սիրուն,

Մի հօրդ ու մօր փախչիր ծոցուն,

Թէ քիչ վրզիդ մանեակը ոսկի,

Բերեմք զոսկի բոլոր երկրի.

Թէ Մըծբին փոքր է քեզ գարպաս»:

Օժիս քեզ տամք բոլոր ըզչայս»: —

Հայոց կոյսեր, եւ այլն:

— « Դարպաս տըւէք ինձ սեւ այն բանս
Աւր սուրբ Թագէն կայ պարաւանդ .
Ինծի մանեակ կամ ապրանջան
Խընդրեմ՝ զերկաթ շըզմայ նորան .
Ինձ թէ ղաշխարհ այլ տաք՝ քիչ է ,
Սիրտ իմ զերկին օժիտ խընդրէ » :
Ասաց , թողուց մօր գիրկն անուշ ,
Վաղեց իբանտ Կոյսըն քընքուշ :
Հայոց կոյսեր ,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ տըւէք տարէք ուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Բ.

« Սուրբ Առաքեալ , — գոչեց իբանտ մըանելով , —
Լըցաւ բաղձանքըս կէս , հասայ քուկին քով .
Ե՞րբ իմ լըցուի իղձ կատարեալ , Ե՞րբ հասնիմ
Առ երկնաւոր Փեսայն իմ » . . .

Հեծեց Սանդուխտ , ու կարօտոյ տաք արցունք
Կաթկըթէին զինչ շաղ զոր տան աստեղունք .
« Սուրբ Առաքեալ , — կըսէր , — ոչ , Երբ ես փարիմ
Էնդ ցանկալի Փեսայն իմ » :

— « Վաղը , ով կոյս , վաղը , — կըրկնեց Առաքեալ , —
Սուրբ բաղձանքիու վաղիւ հանիս կատարեալ .
Քեզմէ պակաս չէ կարօտել յերկնի լոյս
Եւ քս Փեսայն , անմեղ Կոյս » : —

Ասաց Թագէ , եւ ըղճրեղէն շըրթունքներ
Խոնարհեցուց կուսին խուրբ շըզմաներ .
Եւ ըզվլսեմըն զայն համբայր սըրբասէր
Սըցունքներով իւր կընքէր :

Խառնըւեցան երկու աչաց արցունքներ ,
Զինչ շուշանին եւ վարդին թաց տերեներ
Երբ հոլն այգուն ծոցերն որբէ գող իդող
Թափիեն խառնեն հոսն ու ցոլ :

Թափիէր արցունք եւ կուսին մայր իգահոյս ,
Բայց ոչ նոյնպէս անուշ էր այն , այլ անյօյս .
Աչ , առաջին էր այն գիշեր՝ ուր խեղճ մայր
Իւր աղջկանէն որբ մընայր :

Խեղճ մայր , լացաւ , շատ հառաջեց ու լացաւ ,
Կանչեց աղջիկն . . . այլ պատասխան մը չառաւ .
Մաղեր փետեց , « Սանդուխտ , Սանդուխտ իմ » գոչեց .
Լացաւ , լացաւ , հառաջեց :

Սըրտէն փախեր յօյս, եւ ընկճել էր խեղճ մայր,
Նըւազեցաւ, ու երբ վերջին շունչ կուտայր՝
Դեռ հեծեծէր. «Ուր ես, աղջիկ իմ սիրուն»
— Տիրեց մահու լըռութիւն : —

Գ.

Երբ առաւօտուն ծագեց իբանտ լոյս՝
Գըտաւ սուրբ Թագէն հըսկող ընդ սուրբ Կոյս,
Որ գիշերն իբուն սաղմոսաց գըրուակ
Անուշ երդէին հըեշտակ ընդ հըեշտակ :

Արեւուն ճաճանչ շողաց բոցահատ,
Պըսակ քոլորեց սուրբ Կուտին ճակատ . . .
Ապշեցաւ Թագէ, եւ պահ մը ինքզինք
Կարծեց Սանդըխոյ հետ նըստիւ յերկինք : . . .

Բանտին աշաւոր ճըռընչեն դըռներ
Ու ներս խուժեցին մահահոտ զէնքեր . . .
Անէծք, հայհոյանք՝ հոն սաղմոսներուն
Զուգախառնեցան ընդ սուրբ ալէլուն :

Դունդ մը զինուորաց՝ զինչ ժանտ բագէներ
Հեղիկ աղաւնոյն հետ կըռուել եկեր,
Բայց քան ըզնոցայն սիրտ ծարւած յարիւն՝
Կուտին սիրտ ծարաւ էր բուն իւր մահուն :

Քաշեցին նորա վասկիկ բազուկներ . . .
Նա ծանըր շըղթայն թեթեւ գըտանէր . . .
Քան դիւր հալած չաց քայլերն առաջէր,
Կարծես մօրն իդիրկ գառնուկն էր դիմէր :

Նոքա կարծէին՝ թէ իմահ տանին,
Այլ յերկնի ճամբան առաջնորդէին,
Երկնի՝ որ բացուել էր իրեն առջեւ,
Հըեշտակք ըզլուսոյ պատրաստել են թեւ :

Վազել են վազել ծերք արդայք բոլոր,
Մայրեր՝ աղջիկներ ողբան ոըգաւոր . . .
«Ո՞չ, ծաղիկ տեսքիդ թէ դու չունիս գութ՝
Սանդուխտ, մեզ գըթա, մի զըրկեր տեսուդ» :

Հայրը . . . — ոչ, ինչպէս տամսուրբ զանուն հօր
Յայն՝ որ էր գազան գարձել աշաւոր, —
«Ի՞նչ գըթայք՝ գոչեց, զարկէք, մեռուցէք,
Մօրը ետեւէն անդութն յըզեցէք» :

Երկու կարգ շարուին երկու դաս զինուոր,
Սանդուխտ աղեղանց իմշջ բիւրաւոր.
Շառաչեն նեաեր քան շանթ փայլականց,
Բայց իրար պատռեն դապանք մարդախանձ :

Երբ մահունց այն գէղ տեսաւ կոյմն արի,
Ցոգւոց եհան, «Տէր իմ, գոչեց, բարի,
Մի զլրէժ իմ առնուր, ինձ թըշնամի չեն,
Սոքա շընորհել ինձ ըղքեղ կուղեն :

Առ քեզ գամ, նհ, բաց գիրկդ անուշ Յիսուս,
Ընդունէ Փեսայդ ըղչոգին իմ կոյս» . . .
Երկին վերացոյց աչերն երկնային,
Ընդ երկին խառնէր եւ կարմրուկ հոգին :

Այն ժամուն մէկ սուր՝ քան ըղնետ կըրակ
Իջաւ շեշտ կուսին իծոցիկ ճերմակ.
Ո՛հ, բոսորափայլ ցայտեց սուրբ արիւն,
Զինչ ցոլուն վարդեր թերթաթափ իձիւն . . . —

Հայնց կուսաններ,
Շուշանն է ընկեր.
Ելէք քաղեցէք
Ոգւոյդ զարդ առէք :

Դ.

Իսկ դու, ով կոյս, որ արդ յերկնից իխորան
Անմահ Փեսիդ իծոց խայտաս անբաժան,
Ով սուրբ Սանդուխտ, նայէ մաքուր յայն կոյսեր
Որ հարազատ են քու քոյրեր :

Սոցա այլ սիրտ այն քաղցր արիւն խոխոջայ
Զոր քեզ տըւաւ մայր Հայաստան եւ նոցայ.
Նոցա այլ սիրտք նհ բուսցընեն հայրենեաց
Քո ծաղկըներ վարդաղգեաց :

Հայնց կոյսեր,
Շուշան՝ վարդեր
Փունջ փունջ առէք տարէք ուխտ
Առ թագուհին ճեր Սանդուխտ :

